


ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՁԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵԿՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննվում են բառակազմական ձևայինների բազմիմաստության և համանունության տարանջատման հարցեր: Միևնույն հնչումն ունեցող ձևայինների համանունության որոշման սկզբունքները քիչ են առանձնացված: Հայ լեզվաբանական գրականության մեջ բազմիմաստ և համանուն ածանցները փաստորեն ուղղակի թվարկվում են: Քանի որ հոմանիշության, հակահիշության, համանունության և բազմիմաստության բնութագրերը հատուկ են լեզվի բոլոր մակարդակների միավորներին, ընդհանուր առմամբ ածանցների վրա էլ կարելի է տարածել նույն չափանիշները, որոնք կիրառելի են բառային համանունների նկատմամբ:

Հոդվածում նշվում են չափանիշներ համանուն ածանցների տարբերակման համար: Դրանց մեջ անչափ կարևոր նշանակություն ունեն այդ լեզվական միավորների իմաստային անփոփոխակի (ինվարիանտի) որոշումն ու առանձնացումը, ինչպես նաև ածանցի՝ բառակազմական տարբեր հիմքերի հետ բաղադրվելու հատկանիշը: Առաջարկվող չափանիշների հիման վրա քննվում են հայ լեզվաբանական գրականության մեջ իբրև բազմիմաստ ներկայացված մի շարք ածանցներ:

Բանալի բառեր - *ձևայինների համանունություն, բազմիմաստ ածանցներ, համանուն ածանցներ, ածանցների տարբերակներ, բառակազմական հիմք, իմաստային անփոփոխակ, բազմիմաստության և համանունության սահմանազատման չափանիշներ*

Ներածություն: Հայերենի բառային և քերականական համանունները վաղուց են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դրանց մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ, կան բառարաններ և մենագրական ուսումնասիրություններ¹: Սակայն բառակազմական ձևայինների համանունության վերաբեր-

* **Մանուկ Ֆելեքյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ
Манук Фелекян – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ
Manuk Felekyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language
Էլ. փոստ՝ feleqyanmanuk@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0008-3510-6426>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 08.05.2024

Գրախոսվել է՝ 22.05.2024

Հաստատվել է՝ 03.07.2024

© The Author(s) 2024

¹ Տե՛ս, օրինակ, **Ա. Ա. Աբրահամյան**, Հայերենի քերականական համանունության շուրջ // Պատմա-բանասիրական հանդես, 1974, № 1, էջ 20-38: **Ռ. Շալոնց**, Համանուն բառերը ժամանակակից հայերենում // Լեզվի և ոճի հարցեր, հ. 4, Եր., 1977, էջ 5-76: **Ն. Պառնասյան**, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1979: **Ե. Գևորգյան**, Բառաքերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1983: **Ե. Գևորգյան**, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Եր. 1978:

յալ եղել են միայն առանձին դիտարկումներ, մասնակի անդրադարձներ՝ երբեմն այլ հարցերի քննության ժամանակ²:

Լեզվաբանական գրականության մեջ դեռ վերջնականապես մշակված չեն բառային համանունության և բազմիմաստության սահմանազատման սկզբունքները, թեև կան շատերի կողմից ընդունված մի քանի հիմնական չափանիշներ: Միևնույն հնչումն ունեցող ձևայինների համանունության որոշման սկզբունքները է՛լ ավելի քիչ են առանձնացված: Մենագրություններում և բուհական դասագրքերում բազմիմաստ և համանուն ածանցները փաստորեն ուղղակի թվարկվում են: Դրանց տարանջատման մեկ-երկու չափանիշ նշում է միայն Է. Աղայանը³: Իսկ Ս. Գալստյանը ավելի խիստ չափանիշ է ընտրում՝ գրելով. «Նյութական միևնույն արտահայտությունն ունեցող, բայց միաժամանակ տարբեր խոսքի մասեր կերտող ածանցները մեր սկզբունքով տարբեր ածանցներ են, որովհետև հանդես են գալիս բառակազմական տարբեր կաղապարներում»⁴:

Քանի որ հոմանիշության, հականիշության, համանունության և բազմիմաստության բնութագրերը հատուկ են լեզվի բոլոր մակարդակների միավորներին, ընդհանուր առմամբ ածանցների վրա էլ կարելի է տարածել նույն չափանիշները, որոնք կիրառելի են բառերի նկատմամբ⁵:

Ածանցների իմաստային անփոփոխակը: Ինչպես և բառերի պարագայում է, բառակազմական ձևայինների բազմիմաստության և համանունության սահմանը որոշելու համար անչափ կարևոր նշանակություն ունեն այդ լեզվական միավորների իմաստային անփոփոխակի որոշումն ու առանձնացումը: Լեզվաբանության մեջ անփոփոխակ (ինվարիանտ) հասկացությունը, որը փոխառված է մաթեմատիկայից, առաջին անգամ ձևակերպվել է հնչյունաբանության բնագավառում Պրահայի լեզվաբանական խմբակի և մասնավորապես Ն. Տրուբեցկոյի կողմից: «Ցանկացած հնչյուն կարող է իրականացվել մի շարք տարբեր հնչումներով»⁶, – գրում էր Ն. Տրուբեցկոյը՝ առանձնացնելով հնչույթը՝ որպես անփոփոխակ, նրա խոսքային իրացումներից կամ տարբերակներից (փոփոխակներից)՝ հնչուններից: Հետագայում ինվարիանտի հասկացությունը տարածվեց լեզվաբանության նաև այլ բնագավառներում:

Մի կողմ թողնելով լեզվական անփոփոխակի առանձնացման հնարավորության կամ մինչև իսկ դրա գոյության մասին բանավեճերը՝ մենք ընդունում ենք, որ լեզվական ցանկացած իմաստակիր միավորի համար կարելի է առանձնացնել մի այնպիսի ընդհանուր (թեկուզ և երբեմն խիստ վերացական)

² Տե՛ս, օրինակ, Ս. Էլոյան, Ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1963, էջ 152-154: Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, երրորդ հրատարակություն, Եր., 1999, էջ 254-255: Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 288-290: Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 227-228:

³ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 288-290:

⁴ Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 12:

⁵ Տե՛ս Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 287:

⁶ Трубецкой Н. С. Основы фонологии, 2-е издание, изд. "Аспект пресс", М., 2000, с. 44.

նշանակություն, որը իր հիմնական կողմերով կրկնվում է այդ միավորի խոսքային յուրաքանչյուր իրացման մեջ: «Անփոփոխակը այն ընդհանուրն է, որն օբյեկտիվորեն գոյություն ունի համեմատաբար միատարր առարկաների կամ երևույթների դասում⁷, – նշում է Վ. Սոլնցևը: – Ինվարիանտությունը առարկաներում գոյություն ունի որպես ընդհանուրը յուրաքանչյուր առանձին առարկայի մեջ: Ինվարիանտությունն ու տարբերակայնությունը նույն առարկայի երկու կողմերն են: Որպես վերացական կամ մտովի պատկերացվող առարկա՝ անփոփոխակը մարմնավորում է դասային հատկություններ: Ինվարիանտը ներկայացնում է ինչպես ամբողջ դասը, այնպես էլ տվյալ դասի յուրաքանչյուր առարկա»⁸:

Համաժամանակությունը և տարժամանակությունը ածանցների համանունության որոշման ժամանակ: Համանունությունը պետք է որոշել համաժամանակյա տեսանկյունից: «...Հայոց լեզվի զարգացման տարժամանակյա կամ պատմական իրողությունները բավարար հիմք չեն կարող տալ ժամանակակից հայոց լեզվի բառային և բառաքերականական համանունության կապերի որոշման համար»⁹: Սա հավասարապես վերաբերում է նաև ձևույթների համանունությանը: Եթե բառը, բառաձևը կամ ձևույթը լեզվի զարգացման ընթացքում ձեռք է բերել նոր ձև կամ իմաստ, ապա նախկին և ներկա միավորները չենք կարող համարել համանուններ¹⁰:

Այսպես, գրաբարի անցյալ դերբայի *-եալ* վերջավորությունը ժամանակակից հայերենում հնչյունափոխվել է *-ել-*-ի, իսկ դրանով կազմված մի շարք բառեր մեր լեզվում պահպանվել են իբրև ածականներ կամ գոյականներ՝ կազմված *-յալ* (<*եալ*) ածանցով (*սովյալ*, *ենթադրյալ*, *որակյալ*, *մեռյալ*, *անցյալ*, *հանգուցյալ*, *հեծյալ* և այլն): Եվ այսօր պնդել, որ մենք ունենք համանուն երկու (բառահարաբերական և բառակազմական) *-եալ* և *-յալ* (<*եալ*) ձևույթներ, սխալ կլինի, քանի որ արդի հայերենում *-եալ* վերջավորությամբ դերբայ ուղղակի չկա:

Կա նաև հակառակ երևույթը: Ժամանակակից հայերենի հարակատար դերբայի *-ած* վերջավորությունը ծագել է գրաբարի *-ած* գոյականակերտ և ածականակերտ ածանցից (որն էլ իր հերթին առաջացել է *ածել* բայի արմատից¹¹)՝ *գործած* («շինվածք, կառուցվածք, կերտվածք»), *կազմած* («1. կազմություն, կառուցվածք, 2. հանդերձանք, 3. կահկարասի, 4. զարդարանք»), *ձուլած*

⁷ Солнцев В. М. Язык как системно-структурное образование. Издание 2-е, дополненное, изд. «Наука», М., 1977, с. 214.

⁸ Նույն տեղում, էջ 218:

⁹ Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), երրորդ հրատարակություն, Եր., 1999, էջ 115:

¹⁰ Հմմտ. Ն. Պառնասյան, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1979, էջ 32:

¹¹ Տե՛ս Գ. Զառուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը // Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Եր., 1998, էջ 8:

(«ձուլվածք, ձուլելը»)¹², նաև *երկիւղած, ողորմած*: Ժամանակակից հայերենում *-ած*-ով գոյականներն առաջացել են համապատասխան հարակատար դերբայներից՝ խոսքիմասային փոխանցմամբ, և չի կարելի արդի լեզվում ընդունել երկու համանուն *-ած* ձևայիններ:

Անառարկելի է համանունությունը, երբ գործ ունենք տարբեր կիրառության, տարբեր գործառույթներ ունեցող ձևայինների հետ: Այսպես, ակնհայտ է համանունությունը հիմնական՝ արմատական ձևայինների և նույնական հնչյունական կազմն ունեցող երկրորդական ձևայինների միջև: Հայերենում կան **արտ**₁ արմատական բառը («մշակելի հող, անդաստան». *արտաստեր, արտամեջ, ցորենարտ* բարդությունների արմատներից մեկը) և նույնահունչ **արտ**₂- նախածանցը («դրսում, դեպի դուրս» բառակազմական նշանակությամբ. *արտահանել, արտագաղթ, արտահաստիքային* և այլն): Լեզվում կան նաև **արտ**₃- (հապավում *արտադրական* բառի. *արտմիավորում*) և **արտ**₄- (հապավում *արտաքին* բառի, *արտգործնախարար, արտարժույթ*) հապավույթները: Մրանք չունեն ո՛չ ծագումնաբանական, ո՛չ իմաստային, ո՛չ էլ այլ կարգի որևէ ընդհանրություն և լիակատար համանուններ են:

Իհարկե, ծագման ընդհանրությունը այսօր երբեմն խանգարում է նույնահունչ ձևայինների հստակ տարանջատմանը իբրև համանուններ: Ասենք՝ **գործ** արմատական բառը («աշխատանք, զբաղմունք, պարապմունք» հիմնական նշանակությամբ) և **-գործ** ածանցակերպը («նախատիպի զբաղմունքով՝ արհեստով՝ մասնագիտությամբ պրոֆեսիոնալ կերպով զբաղվող անձ, մասնագետ» բառակազմական նշանակությամբ) ունեն ընդհանուր ծագում: Ածանցակերպն առաջացել է արմատից. սրանց կապը չի մթազնել և արդի լեզվում հստակ գիտակցվում է: Սակայն քանի որ դրանց բառակազմական գործառույթները տարբեր են, այժմ սրանք պետք է համարվեն համանուններ. *մետաղագործ, ադամանդագործ, քանդակագործ, ատաղձագործ, ածխագործ* և նման բաղադրությունները չեն նշանակում «մետաղի՝ ադամանդի՝ քանդակի ևն գործ», այլ «նախատիպի առարկան մշակող՝ ստեղծող՝ արդյունահանող ևն մասնագետ անձ»: Նույն հարաբերությունն է նաև **բան** արմատի («գործ, աշխատանք», նաև «միտք, գաղափար» նշանակություններով. *բանել, բանվոր, բանաստեղծ* և այլն) և կրկին «նախատիպի ցույց տված զբաղմունքով՝ գործով՝ գիտությամբ՝ առարկայով մասնագիտորեն զբաղվող անձ» բառակազմական նշանակությամբ **-բան** վերջածանցի միջև (*լեզվաբան, մշակութաբան, կենսաբան, տեսաբան, երգիծաբան* և այլն):

Անցումային կամ միջանկյալ փուլում գտնվող համանուն ածանցներ: Պետք է առանձնացնել նաև անցումային փուլում գտնվող ձևայիններ: Հայերենի բազմիմաստ ածանցների թվում նշվում է *-ական* ածականակերտ վերջածանցը, որով կարող են կազմվել նաև գոյականներ: Բայց այդ գոյականները ծագում են

¹² Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, հտ. 1-2, Եր., 2000:

ածականներից՝ խոսքիմասային փոխանցմամբ: Այս դեպքում խոսք չի կարող լինել համանունության մասին: Սակայն արդի լեզվում *-ական*-ը սկսել է գիտակցվել նաև որպես ինքնություն գոյականակերտ ածանց, և կան նրանով կազմված գոյականներ, որոնք չունեն ածականական նախատիպ և խոսքիմասային փոխանցմամբ չեն կերտվել: Դրանք կազմվում են *-ական* ածանցի գոյականական նշանակությամբ կերտված բառերի համաբանությամբ և մեծ մասամբ դիպվածաբանություններ են, ինչպես՝ *խմբայլական, ոչմիթիզական*, նաև հապավումներից՝ *ԵՊՂ-ական, ՀՀՇ-ական, ՔՊ-ական*:

Հայերենի ամենաարտադրողական վերջածանցներից *-որդ*-ը, ինչպես հայտնի է, հիմնականում բայական, մասամբ էլ այլ հիմքերից գոյականներ է կազմում՝ «որևէ գործով մասնագիտորեն կամ սիրողաբար զբաղվող անձ, որևէ բանի մասնագետ» բառակազմական նշանակությամբ (*վարորդ, գնորդ, սավառնորդ, հաճախորդ* են): Գոյականական, ածականական և մակբայական հիմքերով բաղադրություններում (*-որդ* ածանցի միևնույն բառակազմական նշանակությամբ) թեև երկրորդաբար, բայց շատ հստակ գիտակցվում է գործողության նշանակությունը. այսպիսի հիմքերը գրեթե ամբողջապես կազմված են բայանուններից¹³, օրինակ՝ *չմշկորդ* «չմուշկ քշելով՝ չմշկելով զբաղվող անձ», *ծանրորդ* «ծանրություններ բարձրացնելով պարապող մարզիկ», *գնդացրորդ* «գնդացիր կրակով զինվոր», *արշավորդ* (*արշավ* և *արշավել* հիմքերց), *լողորդ* (*լող* և *լողալ*), *հակառակորդ* (*հակառակ* և *հակառակել*), *վստահորդ* (*վստահ* և *վստահել*), *պակասորդ* (*պակաս* և *պակասել*) և այլն: Սակայն հայերենում կան այս կաղապարով կազմված կենսաբանական-բժշկական մի շարք տերմիններ, որոնցում *-որդ* ածանցը կորցրել է «անձ» նշանակությունը՝ *թելորդ, գծորդ, ցցորդ, մագորդ, յուղորդ, բշտորդ* և այլն¹⁴: Ամեն դեպքում, այսպիսի բաղադրությունները կազմված են միևնույն կաղապարի տարբեր ենթակաղապարներով, և մենք գործ ունենք նույն ածանցի տարբեր նշանակությունների հետ: Իսկ թվականական կամ թվի, քանակի հետ առնչություն ունեցող հիմքերից կազմություններում (*քառորդ, կիսորդ, տասնորդ // տասանորդ, քանորդ*) և *-որդ* ածանցով կազմված մի քանի ածականներում (*ավելորդ, նախորդ, հաջորդ, լծորդ*) ստուգաբանորեն նույն այս ածանցի բառակազմական իմաստը այնքան է հեռացել նախորդ կաղապարներում ունեցած իմաստից, որ կարող է առանձնացվել որպես նախորդին համանուն ձև: Նշենք նաև, որ այս վերջին կաղապարները հայերենում արտադրողական չեն:

Բայակերտ *վեր(ա)-* նախածանցը¹⁵ ունի բառակազմական երեք նշանա-

¹³ Տե՛ս Մ. Գալստյան, նշվ. աշխ., էջ 158:

¹⁴ Օրինակները վերցրել ենք Մ. Գալստյանի վերոհիշյալ գրքից (էջ 157):

¹⁵ Մենք այս ածանցով կերտված այլ խոսքի մասերը (ածականներ, գոյականներ, երկրորդաբար՝ մակբայներ) չենք քննում, քանի որ դրանք փաստորեն բոլորը բայանուններ են կամ էլ իրենց բառակազմական հիմքերում ունեն բայական բաղադրիչ:

կություն: Դրանցից երկուսը իմաստային նույն անփոփոխակի տարբերակներն են: Այս դեպքում գործ ունենք ածանցի բազմիմաստության հետ. ա) գործողությանը տալիս է «դեպի վեր, վերևում» նշանակությունը՝ *վերմղել, վերընթանալ, վերհոսել, վերձգվել* և այլն, բ) «գործողությունը կատարվում է վրան մի բանի վրա»՝ *վերահսկել, վերադրել, վերարկել* (հնբ.) և էլի մեկ-երկու բառ: Այս երկու ենթակադապարներում *վեր(ա)-* նախածանցը արտադրողական չէ: Իսկ երրորդ նշանակությամբ այն հայերենի ամենագործուն ածանցներից է: Այս կադապարում ունի «նախատիպ բայի գործողությունը նորից, կրկին, վերստին, երբեմն նոր ձևով կատարվելու» նշանակություն՝ *վերաբացատրել, վերաբացել, վերաբնակվել, վերաբաշխել, վերախմաստավորել, վերադաստիարակել* և այլն, և այլն: Վերջածանցի իմաստային այս տարբերակը թեև ծագումով նույնն է նախորդների հետ (ծագել է *վեր* արմատական բառից), սակայն իմաստով բավականին հեռացել է նախորդներից: Սկսել է մթագնել այս տարբերակների իմաստային կապը, և *վեր(ա)-* նախածանցը կարող է ժամանակի ընթացքում դառնալ նախորդ իմաստներով գործածությունների համանունը, մանավանդ որ մեր նշած առաջին երկու նշանակություններով այժմ այս ածանցը արտադրողական չէ, և նրանցով նոր բառեր այլևս չեն կազմվում:

Ածանցների բազմիմաստությունը և համանունությունը տարանջատելու համար կարևոր է նաև տվյալ ածանցով կազմված բառերի բառակազմական կադապարների և բառակազմական հարացույցների առանձնացումը¹⁶: Այսպես, հայերենի *-ուստ* հնչյունական կազմն ունեցող ածանցը բայական հիմքերից կազմում է գոյականներ՝ *վերացական, մասամբ էլ կոնկրետ առարկայական իմաստով* (սրանք միննույն կադապարի երկու ենթակադապարներն են)՝ *գալուստ, փախուստ, կորուստ* և *հազուստ, պահուստ, էլուստ* և այլն: Նույն հնչումն ունեցող ածանցը ածականական և մակբայական հիմքերից կազմում է մակբայներ՝ *այլուստ, վերուստ, արտաքուստ, ներքուստ, ամենուստ, հեռուստ*: Սրանք համանուն ածանցներ են: Այս դեպքում կարևոր է նաև այդ ածանցների տարբեր ծագում ունենալը. *-ուստ1* գոյականակերտ ածանցն ունի հնդեվրոպական ծագում, իսկ *-ուստ2* մակբայակերտ ածանցը ծագում է *ուստ* «որտեղից» բառից¹⁷:

Ածանցների համանունության մի քանի դիտարկումներ: Այժմ, վերոհիշյալ չափանիշները հաշվի առնելով, քննենք հայերենի լեզվաբանական գրականության մեջ իբրև բազմիմաստ ներկայացվող մի քանի ածանցներ՝ պարզելու համար՝ դրանք իսկապե՞ս բազմիմաստ են, թե՞ դրանց մեջ կան նաև համանուններ:

¹⁶ Բառակազմական հարացույց ասելով՝ մենք հասկանում ենք նույն նախատիպ հիմքից կազմված և բառակազմական նույն (առաջին) քայլում կերտված բառերի ամբողջությունը:

¹⁷ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 35:

Նշվում է, որ *-ին* ածանցը¹⁸ հիմնականում ածականական հիմքերից կազմում է ածականներ՝ նախատիպին տալով սաստկական նշանակություն՝ *մթին, լռին, նրբին, դյուրին* և այլն: Ապա նաև գործիականի հիմքից (նաև գրաբարի) կրկին սաստկական նշանակությամբ ածականներ՝ *լիովին, ազգովին, գլխովին, բոլորովին, ամեննին, տակավին* և այլն: Այս ածանցով ունենք նաև տեղ ցույց տվող հիմքից բաղադրություններ, որոնցում չկա սաստկություն իմաստը՝ *վերին, միջին, ստորին, տեղին, առաջին, հետին* և այլն: Այս դեպքում արդեն գործ ունենք համանուն ածանցի հետ:

Հայերենի ամենաբազմիմաստ ածանցների թվում նշվում է *-ակ* վերջածանցը: Հայերենի ամենակենսունակ այս ածանցը դրվում է երեք հիմքերի վրա՝ գոյականական, ածականական ու բայական, և կազմում է հիմնականում գոյականներ և ածականներ, իսկ նրանով կազմված *մենակ* և *միայնակ* բառերը ունեն նաև մակբայական նշանակություն: Այս ածանցով գոյականական հիմքերից կազմված գոյականներն ունեն «նախատիպի փոքրը, նվազը, փաղաքշականը, երբեմն էլ արհամարհական-նվաստականը» բառակազմական նշանակությունները՝ ա) *տնակ, լճակ, սայլակ*, բ) *աղջնակ, թռչնակ, որդյակ, պատանյակ*, գ) *գրչակ, իմաստակ, էշակ*: Այս նշանակությունների իմաստային անփոփոխակը նույնն է. յուրաքանչյուրի փոքրը կարող է լինել թե՛ փաղաքշելի և թե՛ արհամարհելի: Սրանք մինևույն ածանցի իմաստային տարբերակներն են: Գոյականական հիմքերից շատ կազմություններում *-ակ* ածանցը, ինչպես նշում է Ս. Գալստյանը, նվազական նշանակություն չի դրսևորում, այլ «հանդես է գալիս որպես բառակազմական բաղադրական ածանց, և *-ակ* ածանց ունեցող և չունեցող բաղադրությունները նման դեպքերում տարբեր հասկացություններ արտահայտող բառեր են»¹⁹, ինչպես՝ *աղյուսակ, գլանակ, գնդակ, խոյակ, կայծակ, նոնակ, վահանակ, օղակ*: Սակայն այս նշանակությամբ ածանցը չի կարելի նախորդի համանունը համարել, քանի որ իմաստային անփոփոխակը նախորդների հետ նույնն է. այս կազմություններում դեռևս հստակ գիտակցվում է նաև «նախահիմքի փոքրը» ուղղակի իմաստը, ինչն էլ հաճախ նշվում է հայերենի բառարաններում որպես այդ բառերի ոչ հիմնական նշանակություն:

Ածականներից *-ակ* ածանցը կազմում է ածականներ՝ նախահիմքի իմաստի վերահաստատման, երբեմն էլ փաղաքշական կամ սաստկական նշանակությամբ: Այս դեպքում նույնպես իմաստային ինվարիանտը նույնն է՝ «հատկանիշի վերագրում կամ հատկանիշի տարբեր աստիճանների վերագրում», ինչպես՝ *քառադիմակ* («չորս երես կամ կողմ ունեցող»), *լուսավալյակ* («լույսի

¹⁸ Այս և հաջորդ ածանցների նշանակությունները և բառակազմական արժեքը նկարագրելիս մենք հիմնականում հենվել ենք Ս. Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում», մենագրության և Ա. Մուքիսյան, Բ. Մուքիսյան, Մ. Ֆելեքյան, «Ժամանակակից հայոց լեզու», Եր., 2017 բուհական դասագրքի վրա:

¹⁹ Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 60:

փայլը՝ ցուքը վրան»), *կապուտակ, անուշակ, խառնակ, կլորակ* և այլն:

Ածականական հիմքերից այս ածանցը կազմում է նաև գոյականներ՝ գործողի անվան ընդհանուր նշանակությամբ (անձ կամ առարկա, «մի բան անողը»)՝ *սահնակ, կոչնակ, սողնակ, սպասավորակ* («սպասավորող, զինակիր»), *խոսնակ* և այլն: Սրանց բաղադրյալ հիմքերում կա բայական բաղադրիչ. հիմքում առկա հատկանիշի հասկացությունը արտահայտվում է գործողությամբ: Բուն ածականներից կազմությունները ցույց են տալիս առարկա, որն ունի նախատիպի հատկանիշը՝ *պաղպաղակ, փչակ, հարթակ, ամրակ, նաև միջնակ, ներքնակ* և այլն:

Բայական պարզ և բայական վերջնաբաղադրիչ ունեցող բաղադրյալ հիմքերից -*ակ* ածանցով կազմվում են գոյականներ՝ «մի բան անողի, գործողի» բառակազմական նշանակությամբ: Սրանք անձերի (*բուժակ, սուզակ, պատվիրակ, կատակերգակ, հեծելակ*) և առարկաների, մեծ մասամբ գործիքների անուններ են (*բռնակ, ծորակ, սավառնակ, սեղմակ, հեռադիտակ, վերելակ*):

Կան նաև բայական հիմքով կազմված ածականներ՝ «նախահիմքում նշված գործողությամբ բնութագրվող հատկանիշը ունեցող» բառակազմական նշանակությամբ՝ *գիտակ, սկսնակ, ունակ, ձախողակ* և այլն: Այս կիրառություններում ևս առկա է հատկանիշի չափի, տվյալ դեպքում՝ սաստկության իմաստային անփոփոխակը, ասենք՝ *գիտակ*՝ «տվյալ բանին լավատեղյակ, քաջածանոթ», *հաջողակ*՝ «իր ձեռնարկումներում միշտ կամ մեծամասնաբար հաջողող՝ հաջողության հասնող», *սկսնակ*՝ «որևէ գործունեություն դեռ նոր սկսող, անհմուտ» և այլն:

Ածականական և բայական հիմքերից գոյականներ կազմող -*ակ* ածանցը պետք է տարբերակենք համանուն -*ակ* նվազական-փաղաքշական վերջածանցից: Առաջին բաղադրություններում նույնիսկ ամենաընդհանուր ձևով չի կարելի առանձնացնել «նախատիպի փոքրը» իմաստային անփոփոխակը: Վերջին երկու խմբերի իմաստային ընդհանուր նշանակությունն է «մի բան անող առարկա կամ անձ»: Այսպիսով, ելնելով -*ակ* ածանցի բառակազմական նշանակություններից և տարբեր հիմքերի հետ զուգորդվելու ունակությունից՝ հայերենում կարող ենք տարբերակել երեք համանուն ածանցներ: -*Ակ*, ածանցը գոյականական հիմքերից կազմում է գոյականներ՝ ա) նախատիպի փոքրը, բ) նախատիպի նվազական-փաղաքշականը, գ) նախատիպի նվաստական-արհամարհականը ենթակադապարներով, և գոյականական հիմքերից, որպես բառակազմական բաղադրական ածանց, կազմում է գոյականներ, որոնք նախատիպի ածանցագուրկ ձևերի համեմատությամբ այլ հասկացությունների անվանումներ են, բայց երկրորդաբար պահում են «նախատիպի փոքրը» նշանակությունը: Այս ածանցի իմաստային անփոփոխակն է «նախատիպի փոքրը, նվազը»: Սրան համանուն -*ակ* ածանցը ածականական և բայական կամ բայական վերջնաբաղադրիչ ունեցող հիմքերից կազմում է ածականներ՝ «ածականական իմաստի վերահաստատման, երբեմն էլ փաղաքշական կամ

սաստկական նշանակությամբ», ընդ որում՝ բայափոխ կազմություններում ևս առկա է հատկանիշի չափի, տվյալ դեպքում՝ սաստկության իմաստային անփոփոխակր: Երրորդ համանունը՝ *-ակ3*, կրկին գոյականակերտ է, միանում է բայական պարզ, բայական վերջնաբաղադրիչ ունեցող և բայանուն ածականներից կազմված բաղադրյալ հիմքերին, սակայն նույնիսկ երկրորդաբար չունի «նախատիպի փոքրը» բառակազմական նշանակությունը: Մրա իմաստային անփոփոխակրն է «գործողի անուն, մի բան անողը (անձ կամ առարկա)»:

Եզրակացություններ

- Ածանցների բազմիմաստության և համանունության տարբերակման գլխավոր չափանիշը իմաստաբանականն է: Բազմիմաստ ածանցների բոլոր նշանակություններում առկա է միևնույն իմաստային անփոփոխակր: Համանուն ածանցները չունեն իմաստային առնչակցության որևէ եզր:
- Մյուս կարևոր չափանիշը ածանցի՝ բառակազմական տարբեր հիմքերի հետ բաղադրվելու հատկանիշն է, ինչպես նաև նոր կերտված բառի խոսքիմասային պատկանելությունը:
- Համանունության որոշման օժանդակ միջոց է ածանցների հոմանիշների ընտրությունը և դրանց հետագա համեմատումը:
- Ածանցների ծագումը ևս պետք է համարվի համանունների տարբերակման միայն օժանդակ միջոց: Համանուն ածանցները կարող են առաջացած լինել ոչ միայն տարբեր աղբյուրներից՝ հիմնականում հնչյունական այլևայլ փոփոխությունների ճանապարհով կամ պատահական նմանությամբ, այլև ստուգաբանական միևնույն նախահիմքից՝ լեզվի պատմական զարգացման ընթացքում իմաստային հետագա երկփեղկման արդյունքում:

МАНУК ФЕЛЕКЯН – Многозначность и омонимия словообразовательных морфем в современном армянском языке. – В статье рассматриваются вопросы дифференциации полисемии и омонимии лексических форм. Принципы определения омонимичности форм, имеющих одинаковое звучание, четко не выделены. В армянской лингвистической литературе многозначные и омонимичные суффиксы фактически просто перечисляются. Поскольку характеристики синонимии, антонимии, омонимии и полисемии являются общими для единиц всех уровней языка, в целом те же критерии, которые применимы к лексическим омонимам, могут быть распространены и на суффиксы. В статье указаны критерии дифференциации омонимичных суффиксов. Основным критерием дифференциации многозначности и омонимичности суффиксов является их семантика: во всех значениях многозначных суффиксов присутствует один и тот же семантический инвариант. Омонимичные суффиксы не имеют какой-либо семантической связи. Другим важным критерием является способность суффикса сочетаться с различными словообразовательными основами, а также частичечевая принадлежность вновь образованного слова. Происхождение суффиксов следует рассматривать лишь как вспомогательное средство для различения омонимов. На основе предложенных критериев исследуется ряд суффиксов, представленных в армянской лингвистической литературе как многозначные.

Ключевые слова: *омонимия морфем, многозначные суффиксы, омонимичные суффиксы, варианты суффиксов, словообразовательная основа, семантический инвариант, критерии разграничения многозначности и омонимии*

MANUK FELEKYAN – *Polysemy and Homonymy of Derivational Morphemes in the Modern Armenian Language.* – This article is about differentiation of polysemy and homonymy of lexical forms. Principles for determining the homonymous forms that are pronounced same are not much distinguished. In Armenian linguistic literature, polysemantic and homonymous suffixes are simply listed. Since the characteristics of synonymy, antonymy, homonymy and polysemy are common in all units of language, the criteria applicable for homonyms can be applied to suffixes as well. Criteria for differentiating homonymous suffixes are described in this article.

The main criterion for differentiating the polysemy and homonymy of suffixes is their semantics: all meanings of polysemous suffixes contain the same semantic invariant. Homonymous suffixes do not have any semantic connection. Another important criterion is the ability of the suffix to be combined with various word-forming stems, as well as the part-of-speech affiliation of the newly formed word. The origin of suffixes should be considered only as an aid to distinguishing homonyms.

Based on the proposed criteria, a number of suffixes knowns as polysemantic in Armenian linguistic literature, are studied.

Key words: *homonymy of morphemes, polysemous suffixes, homonymous suffixes, variants of suffixes, word-formation basis, semantic invariant, criteria for distinguishing polysemy and homonymy*